

Ճանապարհ, ժամանակ, արագություն/մաս 3

Միավոր ժամանակում մարմնի անցած ճանապարհը նրա շարժման արագությունն է:

Արագությունը կարելի է չափել արագաչափի միջոցով:



Օրինակ`

Կարող ենք ասել.

Ավտոմեքենան շարժվում է ժամում 70 կմ

արագությամբ, կամ ավտոմեքենան շարժվում է 70կմ/ժ արագությամբ:

Մարմնի շարժման արագությունը հավասար է նրա անցած ճանապարհի և ծախսած ժամանակի քանորդին:

Այսինքն`

Արագություն = Ճանապարհ : Ժամանակ

Մարմնի անցած ճանապարհը հավասար է նրա շարժման արագության և ծախսած ժամանակի արտադրյալին:

Ճանապարհ = Արագություն · Ժամանակ

Մարմնի ծախսած ժամանակը հավասար է նրա անցած ճանապարհի և արագության քանորդին:

Ժամանակ = Ճանապարհ : Արագություն

Խնդիրներ.

1. Գնացքը 9 ժամում միևնույն արագությամբ անցավ 540 կմ ճանապարհ: Որքա՞ն էր գնացքի շարժման արագությունը:

$$540:9=60\text{կմ/ժ}$$

2. Ավտոմեքենան 11 ժամում միևնույն արագությամբ անցավ 770 կմ ճանապարհ՝ առանց

դադարի : Որքա՞ն էր ամտումեքնայի շարժման արագությունը:

70

3. Որքա՞ն ճանապարհ կանցնի ավտոմեքենան 7 ժամում, եթե շարժվի 65 կմ/ժ հաստատուն արագությամբ՝ առանց դադարի:

$$7 \times 65 = 455$$

4. Հեծանվորդը 4 ժամում ընթացավ 13 կմ/ժ արագությամբ՝ առանց դադարի: Որքա՞ն ճանապարհ նա անցավ:

$$13 \times 4 = 52$$

5. Նարեի տնից մինչև դպրոց 360 մ է: Նա դպրոց է գնացել 40 մ/ր արագությամբ՝ առանց դադարի : Որքա՞ն ժամանակ նա ծախսեց դպրոց գնալու համար:

$$360:4=90$$

6. Սևանից միևնույն ուղղությամբ դուրս եկան երկու ավտոմեքենա: 9 ժամ հետո որքա՞ն կլինի նրանց միջև եղած հեռավորությունը, եթե առաջին ավտոմեքենան ժամում անցնում է 75 կմ, իսկ երկրորդը՝ 65 կմ:

$$75-65=10 \times 9=90$$

7. Աշտարակից միևնույն ուղղությամբ դուրս եկան երկու ավտոմեքենա: 5 ժամ հետո որքա՞ն կլինի նրանց միջև եղած հեռավորությունը, եթե առաջին ավտոմեքենան ժամում անցնում է 55 կմ, իսկ երկրորդը՝ 60 կմ:

$$5 \times 50=250$$

8. Բեռնատարը 250 կմ ճանապարհի առաջին 120կմ-ն անցավ 60 կմ/ժ արագությամբ, իսկ մնացած մասը՝ 65 կմ/ժ արագությամբ:

Բեռնատարը քանի՞ ժամում անցավ այդ ճանապարհը:

4ժ

9. Սիրելի սովորողներ, այժմ ինքների կազմեք նմանատիպ առաջադրանքներ:

Բեռնատարը 550 կմ ճանապարհի առաջին 120կմ-ն անցավ 50 կմ/ժ արագությամբ, իսկ մնացած մասը՝ 65 կմ/ժ արագությամբ:

Բեռնատարը քանի՞ ժամում անցավ այդ ճանապարհը:

Աշտարակից միևնույն ուղղությամբ դուրս եկան երկու ավտոմեքենա: 8 ժամ հետո որքա՞ն կլինի նրանց միջև եղած հեռավորությունը, եթե առաջին ավտոմեքենան ժամում անցնում է 40 կմ, իսկ երկրորդը՝ 80 կմ:

Սևանից միևնույն ուղղությամբ դուրս եկան երկու ավտոմեքենա: 10 ժամ հետո որքա՞ն կլինի նրանց միջև եղած հեռավորությունը, եթե առաջին

ավտոմեքենան ժամում անցնում է 75 կմ, իսկ
երկրորդը՝ 70 կմ: